ԱՆՁԻ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

(գիտական հոդվածների ժողովածու)

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱՆՁԻ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

(գիտական հոդվածների ժողովածու)

Երևան
«ԱՍՈՂԻԿ»
2016

ՀՏԴ 159.923
ԳՄԴ 88.37
Ա 597

Հրատարակվում է Երևանի պետական համալսարանի փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի գիտական խորհրդի երաշխավորմամբ

Գրախոս՝
հոգեբանական գիտությունների դոկտոր
ՌՈՒԲԵՆ ՆԱՂԴՅԱՆ

Գիտական խմբագիր՝
հոգեբանական գիտությունների թեկնածու
ՆԱՐԻՆԵ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Ա 597 **Անձի հոգեբանության տեսական և կիրառական հարցեր** (գիտական հոդվածների ժողովածու). - Եր.: «Ասողիկ» հրատ., 2016.- 280 էջ:

Սույն ժողովածուում ներկայացված են ԵՊՀ Անձի հոգեբանության ամբիոնի դասախոսների, ասպիրանտների և մագիստրոսների հոդվածները: Ժողովածուում ընդգրկվել են անձի հոգեբանության հիմնահարցերին վերաբերող տեսական և կիրառական բնույթի հոդվածներ: Դիտարկվում են անձի ձևավորման և կայացման գործում զարգացման, սոցիալական, մշակութային և էքզիստենցիալ խնդիրներ:

Հոդվածների ժողովածուն կարող է օգտակար լինել անձի հոգեբանության ոլորտով հետաքրքրված մասնագետների և ուսանողների համար:

ՀՏԴ 159.923
ԳՄԴ 88.37

ISBN 978-9939-50-308-0

© Երևանի պետական համալսարան, 2016
© Խաչատրյան Ն. (խմբ.), 2016

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՋԱԲԱՆ 5

ԱՆՁԻ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԿՈՂՄՆՈՐՈՇՈՒՄՆԵՐ

Նարինե Խաչատրյան
ԱՆՁԻ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆՆ ԱՅՍՕՐ. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ 9

Սվետլանա Հարությունյան
ՆԱՐԱՏԻՎ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ. ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ, ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ 16

ԱՆՁ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

Լիլիթ Գարգրցյան
ՍԵՓԱԿԱՆ ՏԱՐԻՔԻ ԸՆԿԱԼՈՒՄՆ ՈՒ ԴՐԱ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ ՀԱՍՈՒՆՈՒԹՅԱՆ ՓՈՒԼՈՒՄ 33

Իրինա Խանամիրյան
ԾՆՈՂԱԿԱՆ ՀՐԱՀԱՆԳՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՆԱՑԻՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՎՐԱ 42

Էլեոնորա Զաքարյան, Մարինե Միքայելյան
ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ԲԱԶՄԱԲՆՈՒՅԹ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԻՔՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ 49

Սոսե Խաչիբաբյան
ՍՏԵՂԾԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՏԱՐԻՔՈՒՄ 61

Մանե Տոնոյան
ԾԵՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄՆԵՐԸ ՄԻՋԻՆ ՀԱՍՈՒՆՈՒԹՅԱՆ ՓՈՒԼՈՒՄ 68

Կարինե Հարությունյան
ՆԿԱՐԻ ԴԵՐԸ ԵՎ ՊԱՏԿԵՐՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԱՆԿՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ 77

Արմինե Հայրապետյան, Լիլիթ Գարգրցյան
ԿԱՊՎԱԾՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԻ ԵՎ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԲԱՐԵԿԵՑՈՒԹՅԱՆ ՓՈԽԿԱՊՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՔՈՒՄ 84

ԱՆՁ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

Աննա Հակոբջանյան
ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՎԱՐՔԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ 97

Լիանա Սարգսյան, Սվետլանա Հարությունյան
ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ԱՐԺԵՔԱՅԻՆ ԿՈՂՄՆՈՐՈՇԻՉՆԵՐԻ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՓՈԽԿԱՊՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 113

Լիլիթ Ավետիսյան, Սոնա Մանուսյան
ԿԱՄԱՎՈՐԻ ՕԳՆՈՂԱԿԱՆ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄՆԵՐՆ ԱՆՁԻ ՆՈՒՅՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՈՒՄ 128
Քնարիկ Առաքելյան
ԱՆՁԻ ԶՈՀԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՄԻՋԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐ 145
Մարիաննա Գևորգյան, Նարինե Խաչատրյան
ՍՈՒԲՅԵԿՏԻՎ ԲԱՐԵԿԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՅՆ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ 153
Անժելա Աֆյան, Նարինե Խաչատրյան
ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՎԱՐՔԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 163

ԱՆՁ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐ

Սոնա Մանուսյան
ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼ-ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԸՄԲՌՆՈՒՄԸ 179
Նվարդ Գրիգորյան, Աննա Հակոբջանյան, Մերի Գրիգորյան
ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՍԱՑՎԱԾՔՆԵՐԸ ՈՐՊԵՍ ՀԱՄՈԶՄՈՒՆՔՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՔԵՐ 193
Աստղիկ Սերոբյան
ԱՆՁՆԱՅԻՆ ԳԾԵՐ ԵՎ ԱՈՒՏՈԿԱՐԾՐԱՏԻՊԵՐ. ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԵՐԻ, ՀՈՒՅՆԵՐԻ ԵՎ ԱՍՈՐԻՆԵՐԻ ՕՐԻՆԱԿՈՎ 210
Անուշ Մկրտչյան
ԱՐԺԵՔՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԿԻՐԱՌԱԿԱՆ ԱՍՊԵԿՏՆԵՐԸ 227
Անի Մովսիսյան, Նարինե Խաչատրյան
ՈՐՈՇ ԱՆՁՆԱՅԻՆ ՓՈՓՈԽԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ՏԱՐԲԵՐ ՄՇԱԿՈՒՅԹՆԵՐՈՒՄ ՍՈՑԻԱԼԱԿԱՆԱՑՈՒՄ ԱՆՑԱԾ ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՕՐԻՆԱԿՈՎ 238

ԱՆՁ ԵՎ ԷՔԶԻՍՏԵՆՑԻԱԼ ԽՆԴԻՐՆԵՐ

Լուսինե Աղաբեկյան
ՄԱՀՎԱՆ ՀԵՏ ԲԱԽՈՒՄԸ՝ ՈՐՊԵՍ ԷՔԶԻՍՏԵՆՑԻԱԼ ՓՈՐՁԱՌՈՒԹՅՈՒՆ 257
Նարինե Ադամյան, Իրինա Խանամիրյան
ԱՌՈՂՋԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՄԱՅՐԵՐԻ ԱՐԺԵԻՄԱՍՏԱՅԻՆ ՈԼՈՐՏԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 263
Կարինե Գրիգորյան
ԵՐԵԽԱՆԵՐԻ ՄԱՀՎԱՆ ՎԱԽԻ ՖԵՆՈՄԵՆՈԼՈԳԻԱՆ. ՏԱՐԲԵՐ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 273

ՆԿԱՐԻ ԴԵՐԸ ԵՎ ՊԱՏԿԵՐՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԱՆԿՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ

Կարինե Հարությունյան

Ստեղծագործելն ինքնատիպ գործունեության տեսակ է, որի արդյունքում մարդը ստեղծում է նորը, յուրօրինակը, իրագործում է իր մտահղացումները: Վաղ մանկության շրջանում ստեղծագործության հիմնական տեսակը նկարն է, որը երեխայի ինքնարտահայտման հիմնական ձևերից է: Այն մանկության շրջանում երեխայի հաղորդակցման լեզուն է և աշխարհի արտացոլման գործիքը: Նկարն արտացոլում է երեխայի ներաշխարհը՝ կրելով կարևոր տեղեկատվություն հոգեվիճակի, հոգեկան գործընթացների, բնավորության, սոցիալական հարաբերությունների, երեխայի անձի և նրա շրջակա միջավայրի մասին: Ստեղծագործելու կարողությունը նկարի միջոցով դրսևորվում է՝ սկսած 1.5 տարեկանից, և անձի զարգացման կարևոր նախապայման է: Ստեղծագործելու պահանջմունքը բնորոշ է մարդ տեսակին և ժառանգվում է սերնդեսերունդ [5]:

Նկարը՝ որպես երեխայի գործունեության արդյունք, տարիքային մի շարք առանձնահատկություններ և գործընթացներ ուսումնասիրելու հիմնական աղբյուրն է: Հետազոտելով երեխաների նկարները՝ հոգեբան մասնագետները կարող են դուրս բերել երեխաների զարգացման տիրույթի, հետաքրքրությունների ոլորտի, տարիքային առանձնահատկությունների և դրանց դրսևորման մասին տեղեկատվություն: Հաշվի առնելով վերոնշյալը՝ նկարը, որպես երեխայի հոգեկանի հայելի, եղել և մնում է հետազոտության առարկա, որի դերի, նշանակության, մեկնաբանման և տեղեկատվության ստացման հնարավորություններն անսահման են: Այսինքն՝ դեռևս պարզ չէ, թե նկարի կիրառման կամ մեկնաբանության չբացահայտված էլ ինչ հնարավորություններ գոյություն ունեն:

Սույն հոդվածում ուսումնասիրվում են նկարի պատկերման դերը, գործառույթները, ինչպես նաև մանկության շրջանի զարգացման ընթացքում տեղի ունեցող բոլոր հոգեբանական փոփոխությունները, որոնք արտացոլվում են նկարի միջոցով: Հիմք ընդունելով այն փաստը, որ երեխայի ինքնարտահայտման լեզուն ստեղծագործությունն է, իսկ նկարը երեխայի ստեղծագործական նախասկիզբն արտահայտելու ամենատարածված ձևերից է, ապա, ուսումնասիրելով նկարի պատկերման առանձնահատկությունները, կարելի է ուսումնասիրել նկարի պատկերման աստիճանական զարգացումը և բովանդակային օրինաչափությունները: Այս ամենը

հնարավորություն է ընձեռում հետևել մտածողության, երևակայության, ինքնագիտակցության զարգացմանը մանկության շրջանում, ինչպես նաև դուրս բերել զարգացման ոլորտի հավելյալ չափորոշիչներ:

Դեռևս չունենալով խոսքային հաղորդակցման զարգացած հմտություններ՝ երեխան նկարի միջոցով պատմում է իր համար նշանակալի երևույթների, հասկացությունների, ապրումների մասին, արտահայտում իր հույզերը, ներկայացնում արդիական խնդիրները, ճանաչում ինքն իրեն և աշխարհը: Ստեղծագործելու բնածին պահանջմունքը վաղ մանկության շրջանում առավել հաճախ արտահայտվում է նկարչությամբ [3]:

Այդ է պատճառը, որ երեխաներն իրենց ունեցած հնարավոր նյութերով ստեղծում են անկանոն պատկերներ՝ հաճախ նկարելով սենյակի պատերի, հատակի կամ հագուստի վրա: Մեծահասակները չեն սովորեցնում երեխաներին նկարել, վերջիններս ինքնաբուխ վերցնում են մատիտը կամ գրիչը և անկանոն շարժումներով պատկերներ ստեղծում:

Նկարը և նկարի պատկերումը կարևոր դեր են կատարում երեխայի զարգացման և կայացման գործում: Չնայած գիտական գրականության աղբյուրներում չի հանդիպում «նկարի գործառույթ» հասկացությունը, այնուամենայնիվ, դրա կարևորությունն ու նշանակությունն առավել ճշգրիտ արտացոլելու նպատակով մենք այն պայմանականորեն կանվանենք գործառույթ: Նախևառաջ, նկարն ինքնարտահայտման հիմնական ձևերից է, որի ընթացքում երեխան հաճույք է ստանում բուն ստեղծագործական գործընթացից, նկարչական նյութի հետ հարաբերվելուց, որտեղ ճանաչողական ակտիվության կենտրոնում են նյութի գույնը, որակը, հոտը և այլն: Վաղ շրջանում երեխաները կենտրոնացած չեն գործունեության վերջնարդյունքի վրա. մեծանալուն զուգընթաց՝ կարևորվում է ստեղծագործության գեղագիտական բաղադրիչը, որտեղ տարբերակվում են գեղեցիկը և տգեղը, ճիշտը և սխալը:

Նկարի հաջորդ կարևոր գործառույթը ճանաչողականն է: Համարվում է, որ ամեն երեխա զարգացման որոշակի փուլում նախապես ձգտում է աշխարհի մասին իր գիտելիքները դասակարգել, ապա ընդհանրացնել, հետևաբար՝ նկարչությունն ինքնարտահայտման պահանջմունքը բավարարելուց բացի՝ ծառայում է նաև որպես աշխարհի ճանաչման գործիք: Թղթի վրա մոդելավորելով օբյեկտիվ իրականության հասկացություններն ու առարկաները՝ երեխան դրանց միջև նոր կապեր է գտնում: Նկարի բովանդակություն կարող են դառնալ շրջակա միջավայրի օբյեկտները, իրական, երևակայական հերոսներն ու կերպարները, նշանակալի անձինք և այլն [2]:

Նկարը տարիքային զարգացման վաղ շրջանում իրականացնում է մեկ այլ կարևոր՝ զարգացնող գործառույթ: Ինչպես հայտնի է,

երեխաների մտածողությունը հիմնվում է սխեմաների վրա, հետևաբար՝ երեխան հակված է նկարել իրերը, դրանց կիրառման առանձնահատկությունները և նշանակալի կողմերը: Այդ փաստն անմիջապես կապված է էվոլյուցիոն զարգացման և ինքնապահպանման բնազդի հետ, քանի որ մարդը, ապրելով մեծ ցեղախմբում, ստիպված է եղել հարմարվել և զարգանալ արտաքին պայմաններին համապատասխան, և այստեղ նկարը ծառայել է որպես տեղեկատվության փոխանցման և հաղորդակցման միջոց: Դիտարկելով երեխայի կյանքի առաջին երկու տարիների կենսաբանական և ֆիզիոլոգիական զարգացման առանձնահատկությունները՝ պարզ է դառնում, որ մինչև 1.5-2 տարեկան երեխան սիմբիոտիկ կապի մեջ է մայրական օրգանիզմի հետ: Վերջինս հոգում է երեխայի բոլոր պահանջմունքները, հետևաբար՝ երեխան կարիք չունի պատկերելու համընդհանուր ճանաչելի պատկերներ [7]: Նպաստավոր պայմաններում մեծանալուն զուգընթաց՝ երեխան կարողանում է նկարել օբյեկտիվ իրականությանը համապատասխանող պատկերներ. զարգանում է պատկերավոր մտածողությունը: Բացի այդ, նկարչությունը խթանում է նաև երեխայի հուզական ոլորտի, մտածողության, հիշողության, երևակայության և մանր մոտորիկայի զարգացումը:

Այս գործընթացում կարևորվում է մեծահասակի դերը, քանի որ արտաքին միջավայրի նպաստավոր պայմանները, ստեղծագործական ուղղվածությունը և խրախուսումը դրական միջավայր են հանդիսանում զարգացման համար:

Մեծանալուն զուգընթաց՝ նկարի պատկերումն անցնում է մի շարք փուլերով: Յուրաքանչյուր տարիքային փուլ ունի իր ուրույն հոգեֆիզիոլոգիական առանձնահատկությունները, որոնք արտահայտվում են նկարի ստեղծման գործընթացում: Մի շարք տեսաբաններ անդրադարձել են այդ առանձնահատկությունների ուսումնասիրությանը և դուրս են բերել որոշակի օրինաչափություններ [1]:

Համադրելով և ընդհանրացնելով տարբեր հեղինակների առաջադրած նկարի պատկերման օրինաչափություններն ըստ տարիքային փուլերի՝ առանձնացնում ենք հետևյալ փուլերը. նկարի արարման առաջին փուլը համարվում են մատի, մատիտի, գրչի և նկարչական այլ նյութերի գրաֆիկական հետքերն ու խզբզոցները թղթի մակերեսին: Առաջին տարվա ավարտին երեխան արդեն անկանոն շարժումներ է կատարում և խզբզում է:

1-2 տարեկանում, երեխայի զարգացմանը զուգընթաց, աստիճանաբար կարգավորվում են նրա տեսողական-շարժողական ընկալիչի աշխատանքը, շարժումների հավասարակշռությունը: Արդյունքում՝ աչքերը սովորում են հետևել ձեռքի գրաֆիկական շարժմանը: Մի շարք գիտնականներ հետազոտել են այս տարիքի նկարների առանձնահատկությունները:

Առավել ուշագրավ է Ռոդա Կելոգի (Rhoda Kellogg, 1970) հետազոտությունը, որի ընթացքում ուսումնասիրվել է ավելի քան մեկ միլիոն նկար, արդյունքում պարզ է դարձել, որ դրանք որոշակի էվոլյուցիայի են ենթարկվում թանաքահետքերից մինչև բարդ խորհրդանշանային պատկերներ: Հետազոտությունների արդյունքում ապացուցվել է, որ 2 տարեկան երեխաների նկարներն աննպատակ չեն. դուրս է բերվել տարիքին բնորոշ խզբզանքների մոտ 20 տեսակ: Բոլոր այդ կետերը, գծերը և շրջաններն արտացոլում են մկանային առանձին շարժումներ: Ռ. Կելոգի վարկածի համաձայն՝ յուրաքանչյուր երեխա կարող է նկարել այդ 20 ձևի նշանները, իսկ դրանց վերարտադրման անընդունակությունը կարող է վկայել մի շարք խանգարումների առկայության մասին, որոնք դեռևս նկատելի չեն վաղ շրջանի տարիքային առանձնահատկությունների պատճառով: Վերոհիշյալ 20 պատկերները հիմնարար են երեխաների նկարներում, քանի որ բարդ ստեղծագործական աշխատանքների հիմք են հանդիսանում զարգացման ավելի ուշ փուլերում [մեջբերվում է ըստ 4]:

2-2.5 տարեկանից սկսած՝ երեխան սկսում է գիտակցել, որ թուղթն ունի որոշակի եզրեր և սահմաններ. Արդյունքում՝ նա աշխատում է չանցնել այդ սահմանները: 2.5-3 տարեկան հասակում երեխայի ստեղծագործական գործունեությունը կենտրոնացած է առարկայական աշխարհի վրա: Այդ փուլին բնորոշ բացահայտում է պատկերների հայտնաբերումը սեփական ստեղծագործության մեջ: Այսպիսով, երեխաներն ակտիվորեն սկսում են իրենց նկարների մեջ փնտրել զանազան օբյեկտներ, սակայն նրանց ասոցիատիվ մտածողությունը դեռևս զարգացած չէ, հետևաբար ժամանակի տարբեր պահերին միևնույն պատկերը կարող է զուգորդվել մի քանի տարբեր առարկաների հետ: Նման զուգորդումների արդյունքում բացահայտվում և ի հայտ է գալիս նկարչության նշանային դերը: Պատկերների խորհրդանշանային լեզուն երեխայի համար դառնում է իմաստալից [նույն տեղում]: Արդյունքում՝ իրականացվում են մարդ, կենդանի, բնություն նկարելու առաջին փորձերը, որտեղ կարևոր չէ պատկերների գեղագիտական նշանակությունը: Սկզբունքային է, որ երեխան արդեն կարող է խոսել և արտահայտվել այդ լեզվով:

Գիտակցության նշանային կամ խորհրդանշանային գործառույթը սկսում է ձևավորվել մոտավորապես 3 տարեկանում, երբ երեխան կարող է հետազոտել օբյեկտները և գտնել դրանց փոխարինողը՝ խաղային գործընթացում կիրառելու համար: Աստիճանաբար նշանային համակարգը ստանում է բառային իմաստ և արտահայտվում խոսքի միջոցով: Արդյունքում՝ երեխան սեփական խզբզոցների մեջ սկսում է տեսնել, տարբերակել և անուն տալ առարկաներին ու պատկերներին: Այդ պահից սկսած՝ նա ակտիվորեն

նմանություններ է փնտրում իր պատկերած գծերի, կետերի, դրանց համադրությունների և իրեն արդեն ծանոթ պատկերների միջև, որոնք բնութագրվում են կոնկրետ չափանիշներով և սահմանափակում են օբյեկտների դասակարգման տիրույթը: Նախադպրոցական տարիքում մտածողության համադրության և համեմատության գործառույթն ունի սահմանափակ թվով չափորոշիչներ, հետևաբար՝ երեխայի համար անսովոր ձևով պատկերված ծանոթ օբյեկտին կարող են տրվել տարբեր մեկնաբանություններ: Հիմնականում ոչ տիպիկ և անսովոր պատկերները երեխայի կողմից անվանվում են սխալ: Այդ պատճառով համարվում է, որ նշանային համակարգը ոչ թե բացահայտվում, այլ աստիճանաբար յուրացվում է:

Այս շրջանում երեխան ակտիվորեն սկսում է կիրառել ոչ միայն ակնառու իրերը, այլև փորձում է գտնել դրանց փոխարինողներ: Մտածողությունը ակնառու- գործնականից փոխակերպվում է ակնառու-պատկերավորի: Որոշակի նշանակություն տալով այս կամ այն իրին՝ երեխան սկսում է տիրապետել նաև խոսքային նշանային համակարգին, որի ձևավորմանը նպաստում են նկարչությունը, խաղը և շփումը մեծահասակների հետ [2]:

Այս տարիքային փուլին բնորոշ է նաև երեխայի նկարներում արտացոլվող մեկ այլ կարևոր առանձնահատկություն. խոսքը վերաբերում է հաճախ հանդիպող և առաջին հայացքից անիմաստ, անհասկանալի թվացող մատնահետքերին, թանաքաբծերին ու պատկերներին, որոնք երեխայի համար իր գոյությունը և ներկայությունը փաստող հիմքեր են: Հաշվի առնելով, որ այս փուլում ձևավորվում են երեխայի Ես-ը և ինքնագիտակցությունը, պարզ է դառնում նրա նկարելու և մատնահետքեր թողնելու գերակշռող ցանկության պատճառը:

3-4 տարեկանում երեխան ընկալում է թուղթը որպես աշխարհի տարածություն, որը պետք է կառուցվի համապատասխան ձևով, և որտեղ կարելի է բնակեցնել տարբեր հերոսների. նրանց ոտքերի տակ պետք է լինի հողը, իսկ գլխավերևում՝ երկինքը: Այս փուլում հանդիպող հիմնական պատկերներն աշխարհը մոդելավորելու տարրական ձևերն են, երբ հիմնականում երեխաները նկարում են երկինք, արև, խոտ, տուն, ծառ, մարդ, կենդանի և այլն:

Աշխարհի ճանաչման տվյալ փուլում երեխան օգտագործում է ոչ միայն նկարը, այլև այն ամենն, ինչն ինքնարտահայտվելու և ստեղծագործելու հնարավորություն է ընձեռում տարածության մեջ՝ ավազե քանդակներ, գլուխկոտրուկներ, զանազան խաղեր [4]: Օրինակ, հիմնվելով ապերցեպցիայի վրա՝ երեխան կարող է թխվածքաբլիթը նմանեցնել որևէ կերպարի, փշրել, ապա փշրանքները զուգորդել կենդանիների կերպարների հետ և անուններ տալ դրանց: Նման ակտիվության արդյունքում երեխան աստիճանաբար կարողանում է դասակարգել իր գիտելիքները: Նա աշխատում է

այդ խնդրի շուրջ այն պահից ի վեր, երբ սկսում է տիրապետել լեզվին, որի շնորհիվ կարող է մոդելավորել աշխարհը՝ ստեղծելով դրա խորհրդանշանային փոխակերպումն իր կերտածի կամ նկարած նկարի միջոցով:

Սկսած 5 տարեկանից՝ ի հայտ են գալիս պրոֆիլային նկարները, որոնք հիմնականում շարժման և դինամիկայի ամբողջական ընկալման ցուցանիշներ են: Այսպիսով, երեխան յուրացնում է պատկերավոր լեզուն՝ որպես գլխավոր նշանային համակարգ, որի շնորհիվ նրա մեջ ձևավորվում է աշխարհի ամբողջական պատկերը:

Նախադպրոցական տարիքի հիմնական բնութագրիչներից է աշխարհի մասին սեփական պատկերացումների, ընդհանրացված գիտելիքների փոխանցումը թղթին: Նկարելով երեխան կարողանում է համապատասխան օրինաչափություններ և կապեր դուրս բերել, ինչն էլ նախադպրոցականի գիտելիքների համակարգման հիմնական աղբյուրներից է [5]:

Այս շրջանին բնորոշ մեկ այլ կարևոր առանձնահատկություն է օբյեկտների ինքնատիպ վերարտադրությունը: Երեխաները նկարում են առարկաները ոչ այնքան իրատեսական ոճով, որքան առանձնահատուկ ընդգծված և հիպերբոլացված. սովորաբար ընդգծվում է պատկերի այն հատվածը, որն ամենաշատն է գրավել իր ուշադրությունը: Հիմնականում այդ առանձնահատկությունը պայմանավորված է լինում տարիքին բնորոշ հուզական ընկալմամբ, մարմնահոգեկան կապի պարզությամբ: Արդյունքում՝ երեխաների նկարներն ավելի անմիջական են և հուզական: Օրինակ, երեխան կարող է պատկերել 2 մեծ անիվ, միացնել դրանք մեկ գծով և ասել, որ նկարում պատկերված է հայրիկի մեքենան:

Այս գործընթացում այնքան կարևոր չեն օբյեկտի արտաքին տեսքի առանձնահատկությունները, որքան երեխա-օբյեկտ փոխազդեցության համակարգը, որը հիմնվում է ապրումների և զգայաշարժական փորձի վրա, երբ այդ իրավիճակը ստանում է հուզական երանգավորում: Հետևաբար, երեխաների նկարներն այս շրջանում այնքան տեսա-առարկայական չեն, որքան հուզական [6]: Օրինակ, ընկնելու և ոտքը վնասելու արդյունքում ուժեղ վախի զգացում ունեցած երեխան նկարում է այդ տեսարանը՝ պատկերելով իրեն և ոտքից հոսող արյունը, որն ալիքաձև պատում է թղթի ողջ մակերեսը:

Զարգացմանը զուգընթաց՝ առարկաները դառնում են առավել իրատեսական և պարզ: Եթե մինչև 5 տարեկան երեխաների նկարներում գերակշռում են միանման պատկերվող, մեծահասակների սովորեցրած առանձին օբյեկտների պատկերները, ապա 6 տարեկանից սկսած՝ երեխան հաղթահարում է առաջնային կաղապարները և նկարում իր հետաքրքրության ոլորտում գտնվող բոլոր առարկաները: Այս շրջանում նա ոչ միայն պատրաստ է պատկերել առանձին առարկաներ և սյուժետային նկարներ,

այլև պատկերազարդել գրքեր, հեքիաթներ, դրվագներ իրական կյանքից: Իրական և երևակայական կյանքում հանդիպող յուրաքանչյուր երևույթ կարող է դառնալ երեխայի ստեղծագործության թեմա, հետևաբար՝ որքան զարգացած է ճանաչողական ակտիվությունն արտաքին միջավայրի հանդեպ, այնքան հարուստ և հագեցած են լինում երեխաների նկարները [2]:

Այսպիսով, նկարը երեխայի ստեղծագործական պահանջմունքը բավարարող հիմնական ձևն է, որը կարևոր դեր է կատարում երեխայի զարգացման գործում: Այն ունի ինքնարտահայտման, ճանաչողական և զարգացնող նշանակություն: Զարգացման յուրաքանչյուր փուլում երեխաների նկարները տարբերվում են մի շարք առանձնահատկություններով, որոնք պայմանավորված են հոգեբանական և ֆիզիոլոգիական բնութագրիչներով: Մանկական նկարը հնարավորություն է տալիս հետևել, թե ինչպես են առաջին թանաքաբծերն աստիճանաբար վերածվում պատկերների և սյուժետային նկարների՝ արտացոլելով երեխայի ձևավորման գործընթացը:

Նկարի պատկերման տարիքային օրինաչափությունները կարող են ուղեցույց հանդիսանալ հոգեբան մասնագետների համար: Նկարի որակական և բովանդակային փոփոխությունները թույլ են տալիս բացահայտել և ուսումնասիրել երեխայի հոգեկանի այնպիսի երևույթների ձևավորումն ու զարգացումը, ինչպիսիք են գիտակցության նշանային գործառույթը, խոսքը, ինքնագիտակցությունը, ընկալումը, մտածողությունը, շփումը և այլն: Վերոնշյալ բոլոր բաղադրիչներն առանձին ուսումնասիրության առարկա են, որտեղ անկախ նպատակից (տեղեկատվության հավաքագրում, ախտորոշում, շտկողական կամ թերապևտիկ աշխատանք) նկարի պատկերումը կարող է նոր հորիզոններ բացել ինչպես ուսումնադաստիարակչական, այնպես ել զարգացնող և շտկողական աշխատանքների ոլորտներում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Венгер, А.** *Психологические рисуночные тесты: Иллюстрированное руководство*, М., Изд-во ВЛАДОС-ПРЕСС, 2003.
2. **Мухина, В.** *Детская психология.* М., Апрель Пресс, ЭКСМО-ПРЕСС, 2000.
3. **Оклендер, В.** *Окна в мир ребенка: Руководство по детской психотерапии*, М., Класс, 2003.
4. **Осорина, М.** *Секретный мир детей в пространстве мира взрослых*. СПб., «Питер», 1999.
5. **Пономарев, Я.** *Психология творчества,* Москва, «Наука», 1976.
6. **Фолькельт, Г.** Целостные феномены в изобразительной деятельности детей. *Экспериментальная психология дошкольника.* М., Л., Гос. изд. 1930, с. 113-119.
7. **Фирсов, Л., Чиженков, А.** Очерки физиологической психологии, СПб., «Астер-Х», 2003.